

Հաստատված է
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի
2022 թ. հունվարի 19-ի թիվ 3-Լ որոշմամբ



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ**

2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արդի կրթական մոդելի ձևավորման հիմնախնդիրը բավականին երկար ժամանակ գտնվում է պետական և տեղական կառավարման մարմինների ուշադրության կենտրոնում: Կրթական համակարգը հասարակության արագ փոխակերպման պայմաններում ևս ենթարկվում է փոփոխությունների, սակայն կրթության ոլորտում իրականացվող փոփոխությունները կրում են եզակի և ոչ օրինաչափ բնույթ, ինչը չի համապատասխանում այն դրական զարգացումներին, որոնք անհրաժեշտ և հրատապ են մրցունակ կրթություն ապահովելու համար: Ընդ որում՝ այդ փոփոխությունները տեղի են ունենում կրթական համակարգի գործառնության բոլոր մակարդակներում՝ ուսանողների պահանջներ և ակնկալիքներ, պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողություններ և հմտություններ, կառավարում, միջանձնային հարաբերություններ և այլն: Ուստի, գործող կառավարման համակարգերը, որոնք արդյունավետ են եղել նախկինում, դադարում են նպատակին ծառայել, այն է՝ ապահովել բարձրորակ կրթություն բոլոր տարիքային, սեռային, սոցիալական խմբերի մարդկանց համար, ինչպես նաև նպաստել աշխատակազմի մասնագիտական զարգացմանը:

Մրցունակ կրթական համակարգի ստեղծումը կարևոր է պետության տնտեսական, մշակութային և սոցիալական ոլորտների զարգացման համար: Կրթությունն իրավամբ դարձել է բարեկեցիկ ապրելու գրավական, պետությունների հզորացման և ազգային անվտանգության հիմք:

21-րդ դարում տեխնոլոգիաների զարգացումը, կրթության անընդհատ փոփոխությունները, «Կրթություն բոլորի համար» սկզբունքը դարձել են մարտահրավերներ ուսումնական հաստատությունների, այդ թվում նաև՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի համար, որի զարգացման ռազմավարությունը կառուցվում է մի քանի ուղենիշերի հենքի վրա.

1. որակյալ կրթություն՝ դասավանդման և գնահատման մեթոդների արդիականացմամբ,

2. պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական զարգացման ապահովում,

3. արդյունավետ կառավարում,

4. դպրոց-բուհ-աշխատաշուկա ֆունկցիոնալ կապերի ապահովում:

Ժամանակակից միջազգային չափանիշերին համապատասխան կրթության իրականացման հենասյուներից է նաև «կրթություն-գիտություն» կապը, գիտական

հետազոտությունների արդյունքների ներդրումը կրթական ծրագրերում: Ժամանակակից գիտությունը ոլորտային հետազոտություններից անցում է կատարում հիմնախնդրային հետազոտությունների ձևաչափին՝ լայն հնարավորություններ ստեղծելով սպորտի և առողջ ապրելակերպի համալիր և համակողմանի հետազոտությունների համար, ինչին բուիը հետամուտ է լինելու առաջիկա 5 տարիների ընթացքում:

Ինչպես հայտնի է, ինստիտուտի հիմնական առաքելությունը ֆիզիկական կուլտուրայի բարձրորակ մանկավարժների և մարզիչների պատրաստումն է, որոնք կրթելու են սերունդներ: Դրա հետ մեկտեղ բուիի առաքելության անբաժան մասն է կազմում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի սպասարկման հարակից ոլորտների կայացումը և զարգացումը, դրանց արդիականացման և զարգացման ուղիների մշակումը, մասնավորապես՝ ֆիզիկական վերականգնման, մարզիկների առողջության պահպանման, վնասվածքների կանխարգելման և բուժման այլընտրանքային մեթոդների մշակումը և կիրառումը, սպորտի հոգեբանության հայկական դպրոցի արդիականացումը, սպորտի կառավարման և մարկետինգի ոլորտի կայացումը, ինչպես նաև սպորտային տուրիզմի և մարզական լրագրության զարգացումը:

ՀՖԿՍՊԻ-ն իր առանցքային տեղը պետք է զբաղեցնի Հայաստանում սպորտի զարգացման քաղաքականության մշակման և իրագործման գործընթացում: Հայաստանի Հանրապետության պատմամշակութային և սոցիալ-տնտեսական ներկայիս իրավիճակը պարտադրում է սպորտի և ֆիզիկական ակտիվության խթանման և ոլորտի զարգացման քաղաքականությունը կառուցել ռազմակիրառական նշանակության, ազգի առողջության ապահովման, բարձր նվաճումների սպորտում ճանաչելիության բարձրացման հիմնախնդիրների լուծման շուրջ:

Զարգացման և նախատեսվող բարեփոխումների սույն ռազմավարական ծրագրի մշակման հիմնական նպատակն է ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջ ապրելակերպի առկա խնդիրների լուծման համար հիմնարար կիրառական լուծումների առաջարկը և դրանց իրագործումը, որոնց համար կարևոր են կրթության որակի արմատական փոփոխությունները, որակի ապահովման իրական ձևավորումը և տարածումը, ուսանողների և հասարակության շրջանում կրթության նկատմամբ հեղափոխական մոտեցումների արժևորումը:

Սույն ռազմավարական ծրագիրը հիմնվում է ՀՖԿՍՊԻ-ի մինչ օրս ունեցած ձեռքբերումների ու հաջողությունների, մասնագիտական ներուժի, ինչպես նաև բուիի հետագա զարգացման իրատեսական հնարավորությունների վրա: Միաժամանակ այն լուրջ մարտահրավերներ է առաջադրում ՀՖԿՍՊԻ-ին՝ պահանջելով հետևողական աշխատանք և մարդկային ներուժի և ֆինանսական ռեսուրսների իրաչափ կիրառում: Ռազմավարական ծրագիրը ենթադրում է փոխկապակցված գործողությունների

միաժամանակյա և հաջորդական իրականացում՝ ուղղված ՀՖԿՍՊԻ-ի կրթական, ուսումնական և գիտահետազոտական գործունեության արդիականացմանը և միջազգայնացմանը, ֆինանսական և մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը, շրջանավարտների հետագա զբաղվածության ընդլայնմանը, ինչպես նաև հասարակական գործունեության բազմազանեցմանը:

Ծրագիրն իրականացվելու է ինստիտուտի ներքին և արտաքին շահակիցների լայն ներգրավմամբ և աջակցությամբ կրթության և գիտության ոլորտում ծրագրեր ֆինանսավորող պետական ու միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Ծրագրում ներկայացվում է ինստիտուտի առկա վիճակը, առաքելությունը, տեսլականը, արժեքները: Ծրագրի նպատակը և խնդիրները, դրանց լուծման համար անհրաժեշտ քաղաքականության մշակման հիմնավորվածությունը, առաջարկվող հիմնական ուղղություններն ու ակնկալվող արդյունքները:

Ինստիտուտի մնայուն և հիմնարար արժեքները

Ինստիտուտն իր գործունեության ընթացքում ձևավորել է մնայուն արժեքներ և ավանդույթներ, որոնք միավորում են դասախոսների և ուսանողների մի քանի սերունդ և բնորոշում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նկարագիրը Հայաստանի Հանրապետությունում: Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հիմնարար արժեքներն այն սկզբունքներն ու մոտեցումներն են, որոնք դրված են նրա գործունեության հիմքում: Մեր շրջանավարտը՝ այդ հիմնարար արժեքների կրողն է, դրանց լավագույնս կիրառողն ու փոխանցողը:

Արժեքային ուղենիշերն են՝

- եզակիությունը,
- արհեստավարժությունը,
- կայունությունը,
- հուսալիությունը,
- ճկունությունը,
- նորարարությունը,
- որակը:

ՀՖԿՍՊԻ-ի կարգախոսն է՝ «Մտածի՛ր, գործի՛ր, նվաճի՛ր»:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

ՀՖԿՍՊԻ-ին հավակնում է դառնալ տարածաշրջանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ինչպես նաև այդ ոլորտները սպասարկող մասնագետների պատրաստման, կրթական և գիտահետազոտական գործունեություն ծավալող առաջատար բուհ:

ՀՖԿՍՊԻ-ին կազմակերպություն է, որը՝

- կապահովի որակյալ կրթություն՝ տեսության, գիտության և պրակտիկայի համակցմամբ, կրթության ամուր հիմքի ստեղծման և ուսումնական գործընթացում բոլոր շահառուների արդյունավետ համագործակցության ապահովման ճանապարհով,
- կառաջնորդվի գիտակրթական համակարգի միջազգայնացման հիմնախնդիրներով,
- կառաջարկի ծառայություններ Հայաստանի Հանրապետությունում սպորտային մանկավարժության և սպորտային գիտության համակարգի զարգացման, նորարար մտքի և դրանց կիրառելիության ուղղությամբ,
- կմշակի լրացուցիչ շարունակական կրթական ծրագրեր, կմատուցի խորհրդատվական ծառայություններ հանրային առողջության, սպորտի և սպորտը սպասարկող հարակից ոլորտներում,
- կապահովի ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառում կրթական և հետազոտական գործընթացներում:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՖԿՍՊԻ-ի առաքելությունն է՝ ապահովել ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սպորտը սպասարկող ոլորտների մրցունակ ու որակյալ մասնագետներ՝ նպաստել գիտելիքների ստեղծմանն ու փոխանցմանը, անձի շարունակական զարգացմանը, մարդկային ներուժի ձևավորմանը և տարածաշրջանում սպորտի և ֆիզիկական կուլտուրայի զարգացմանն ու խթանմանը:

Ծրագրի խնդիրներն են.

- 1) Բացահայտել բուհի առկա ռեսուրսները, զարգացման հեռանկարները, գնահատել մարտահրավերները:
- 2) Ստեղծել անհրաժեշտ հիմքեր կրթության զարգացմանը նպաստող միջոցառումների մշակման և իրականացման համար:
- 3) Մշակել առկա խնդիրների լուծման այլընտրանքային տարբերակներ, որոնք առավելագույն արդյունք կապահովեն:
- 4) Ստեղծել բարենպաստ միջավայր արդյունավետ կառավարման համակարգի և զարգացումների համար:
- 5) Կիրառել ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման և դրանց մշտադիտարկման ու վերահսկողության ընթացակարգեր:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՖԿՍՊԻ-ի տեսլականն իրագործելու համար սահմանվել են ինստիտուտի 2022-2026 թթ. գործունեության նպատակները և խնդիրները:

ՆՊԱՏԱԿ 1. Կրթության որակի ապահովում և բարելավում

1. Բարելավել և արդիականացնել կրթական ծրագրերի որակը,
2. Ապահովել հետազոտականություն և պրակտիկականություն ուսուցում,
3. Արդիականացնել ՀՖԿՍՊԻ-ի ուսումնական գործընթացի կառավարման համակարգը,
4. Ստեղծել կրթական հավասար պայմաններ բոլոր սոցիալական խմբերի համար,
5. Սպահովել 5-րդ մակարդակի՝ մասնագիտական կրթություն, հիմնել միջին մասնագիտական ուսումնական հաստատություն (ՄՄՈՒՀ) :

Ակնկալվող արդյունքներ

1. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ և որակյալ կրթական ծրագրեր,
2. Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդների կիրառման ընթացակարգեր,
3. Կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի առկայություն, գործնական կարողությունների և հմտությունների գնահատման մեթոդաբանություն,
4. ՀՖԿՍՊԻ-ի շրջանավարտների զբաղվածության աստիճանի բարձրացում,
5. ՀՖԿՍՊԻ-ի ուսումնական գործընթացի կառավարման արդիական համակարգի առկայություն, այլընտրանքային կրթության ապահովում՝ ուսուցման էլեկտրոնային համակարգի գործիքակազմի զարգացմամբ,
6. Հատուկ կարիք ունեցող ուսանողների ուսումնառության նյութատեխնիկական և ծրագրային պայմանների առկայություն,
7. Բուհի ուսանողական համակազմի կրթական որակի բարձրացում:

ՆՊԱՏԱԿ 2. Գիտահետազոտական գործունեության արդիականացում և զարգացում

1. Մշակել և ներդնել գիտահետազոտական գործունեությունը խթանող մեխանիզմներ,
2. Նպաստել ուսանողների գիտական և նորարարական ակտիվության ու ստեղծագործական նախաձեռնությունների զարգացմանը,
3. Սահմանել ՀՖԿՍՊԻ-ի գիտահետազոտական գործունեության գերակա ուղղությունները, նպատակները և դրանց հասնելու ճանապարհային քարտեզը,

4. Նպաստել ՀՖԿՍՊԻ-ի գիտական հետազոտությունների արդյունքների կիրառելիության բարձրացմանը և առևտրայնացմանը,
5. Ստեղծել ոլորտային գերազանցության լաբորատորիաներ՝ SPIN-off-երի ստեղծման ակնկալիքով,
6. Ապահովել գիտահետազոտական մտքի միջազգայնացում և համատեղ ծրագրերի մշակում:

Ակնկալվող արդյունքներ

1. Գիտական գործունեության խրախուսման քաղաքականություն և ընթացակարգեր,
2. Ուսանողական start-up-երի առկայություն,
3. Ինստիտուտային, ֆակուլտետային, ամբիոնային և անհատական գիտական հաստատված թեմաներ, դրանց իրականացման գործողությունների պլան,
4. Մասնագիտական կրթական ծրագրերում գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներառում, լուսաբանման քաղաքականություն, արդյունքների ներդրման պատվերներ,
5. Գերազանցության և (կամ) կիրառական լաբորատորիայի առկայություն,
6. Բարձր վարկանիշ ունեցող միջազգային գիտական շտեմարաններում աշխատությունների հրատարակում, բուհի ճանաչելիության բարձրացում:

ՆՊԱՏԱԿ 3. Կառավարման արդյունավետության բարձրացում, մարդկային կապիտալի իրացում

1. Կատարելագործել կառավարման մասնակցային մոդելը,
2. Ապահովել մրցունակ և առողջ աշխատանքային միջավայր՝ կարողունակ մասնագետներով, բացահայտել և զարգացնել անձնակազմի մասնագիտական ներուժը,
3. Մշակել սեփական կադրային դպրոցի ստեղծման կառուցակարգեր:

Ակնկալվող արդյունքներ

1. Կառուցվածքային միավորների փոխներգործության, գործառույթների հստակեցման, տեղեկության հասանելիության գործիքակազմի և իրավական հենքի առկայություն, կազմակերպական կառուցվածքի, կառավարման համակարգի և ստորաբաժանումների աշխատանքների արդյունավետության բարելավված ցուցանիշներ,
2. Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի արդյունավետ գործարկում

3. Մրցունակ անձնակազմ / ՊԴԱ, ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմ,
4. Սեփական կադրային դպրոցի առկայություն:

ՆՊԱՏԱԿ 4. Ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացում

1. Ապահովել ՀՖԿՍՊԻ-ի ֆինանսական մուտքերի բազմազանություն, ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսք,
2. Զարգացնել ֆինանսական պլանավորման համակարգ, կատարել ֆինանսների նպատակային բաշխում, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը,
3. Բարելավել և արդիականացնել ՀՖԿՍՊԻ-ի շենքային պայմանները, բարձրացնել կիրառման արդյունավետությունը:

Ակնկալվող վերջնարդյունքներ

1. ՀՖԿՍՊԻ-ի բարելավված ֆինանսական կայունություն, ընդլայնված և բազմազան ֆինանսական հոսքեր,
2. Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման և նպատակային բաշխման մեխանիզմների առկայություն,
3. Ժամանակակից կրթության պահանջներին համապատասխան նյութատեխնիկական բազաների ապահովում, ֆինանսների արդյունավետ օգտագործում, գրավիչ ու հարմարավետ պայմաններով աշխատանքային միջավայր:

ՆՊԱՏԱԿ 5. Միջազգայնացման գործընթացի ընդլայնում և ամրապնդում

1. Ընդլայնել ՀՖԿՍՊԻ-ի միջազգայնացմանն ուղղված գործընթացները՝ ապահովելու բուհի շարունակական ակտիվ մասնակցությունը միջազգային ինտեգրման գործընթացներին:
2. Նպաստել ՀՖԿՍՊԻ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ակտիվ ներգրավմանը միջազգային կրթական գործընթացներում, գիտահետազոտական նախագծերում ու դրամաշնորհային ծրագրերում:
3. Ընդլայնել ՀՖԿՍՊԻ-ի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի, ուսանողության շարժունությունը:
4. Նպաստել գիտահետազոտական մտքի միջազգայնացմանը աջակցելով բարձր հղման ցուցանիշ ունեցող ամսագրերում ՀՖԿՍՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի հրապարակումների ավելացմանը:
5. Խթանել օտարերկրյա ուսանողների ներհոսքը և ընդլայնել աշխարհագրությունը:

Ակնկալվող վերջնարդյունքներ

1. ՀՖԿՍՊԻ-ի միջազգայնացման հայեցակարգն արտահայտող հաստատագրված փաստաթղթի կատարելագործում:
2. Միջազգային դոնոր և դրամաշնորհատու կազմակերպությունների թվաքանակի աճ:
3. Միջազգային և տարածաշրջանային գիտակրթական տիրույթում ներգրավվածության աճ:
4. Բարձր վարկանիշ ունեցող միջազգային պարբերականներում գիտական հրապարակումների թվաքանակի ավելացում:
5. Արտաքին և ներքին տեղեկատվական հարթակներում ՀՖԿՍՊԻ-ի միջազգային գործունեության վերաբերյալ տեղեկության հասանելիության բարձրացում:
6. Օտարալեզու կրթական ծրագրերի առկայություն և կիրարկում,
7. Օտարերկրյա ուսանողների թվաքանակի և աշխարհագրության ընդլայնում:

ՆՊԱՏԱԿ 6. Հանրային և ինստիտուցիոնալ կապերի ընդլայնում և ամրապնդում

1. Ստեղծել երկարաժամկետ համագործակցային կապեր ՀՖԿՍՊԻ-ի արտաքին շահակիցների և հանրային կառույցների հետ:
2. Բարձրացնել ՀՖԿՍՊԻ-ի հասարակական պատասխանատվությունը և ապահովել գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:
3. Մշակել և իրականացնել ՀՖԿՍՊԻ-ի գործունեության մասին տեղեկատվական և քարոզչական ակտիվ քաղաքականություն:

Ակնկալվող վերջնարդյունքներ

1. Իրավական հենքի առկայություն:
2. Համագործակից կառույցների թարմացվող տվյալների բազայի առկայություն:
3. ՀՖԿՍՊԻ-ի գործունեության մասին մատչելի և հասանելի տեղեկատվություն, գործունեության հրապարակայնություն ու թափանցիկություն:
4. Հասարակայնության և ԶԼՄ-ների հետ բուհի բարելավված կապեր և ընդլայնված համագործակցություն:
5. ՀՖԿՍՊԻ-ի PR քաղաքականության առկայություն:
6. ԶԼՄ-ում դրական անդրադարձերի և սոցցանցերում հետևորդների թվաքանակի աճ:
7. ՀՖԿՍՊԻ-ի ճանաչելիության բարձրացում:

ՆՊԱՏԱԿ 7. Լրացուցիչ և շարունակական կրթության բազմազանեցում

1. Ներդրնել ոչ ֆորմալ կրթության բաղադրիչը, այդ թվում՝ ինստիտուտի ուսանողների համար,
2. Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ազգաբնակչության բոլոր տարիքային խմբերի համար շարունակական և ցկյանս կրթության հասանելիություն՝ միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի ներդրմամբ,
3. Խրականացնել ինստիտուտի ՊԴԱ-ի վերապատրաստման ծրագրեր,
4. Խթանել դպրոցականների շրջանում առողջ ապրելակերպը, կազմակերպել «Ամառային դպրոց»-ներ՝ դպրոցականների, այդ թվում՝ ինստիտուտի աշխատակիցների երեխաների համար:

Ակնկալվող վերջնարդյունքներ

1. Որակյալ մասնագետների համալրմամբ՝ աշխատաշուկայի կարգավորում,
2. Կրթության նոր ձևաչափի առկայություն,
3. Անընդմեջ (ցկյանս) կրթության ապահովում,
4. Առողջ ապրելակերպի խթանում:

ՆՊԱՏԱԿ 8. Ուսանողական կյանքի ակտիվության ապահովում

1. Խթանել ուսանողների հասարակական գործունեությունը և նախաձեռնողականությունը:
2. Նպաստել ուսանողների գիտական, ինչպես նաև ուսանողական-մարզական գործունեության ակտիվացմանն ու արդիականացմանը:
3. Բարելավել ուսանողների աջակցության մեխանիզմները:
4. Խթանել ուսանողների հասարակական պատասխանատվության բարձրացման գործընթացների իրականացումը:

Ակնկալվող վերջնարդյունքներ

1. ՀՖԿՍՊԻ-ի որոշումների կայացման գործընթացներում սովորողների ակտիվ և արդյունավետ մասնակցություն,
2. Ուսանողական խորհրդի (ՈԽԽ), Ուսանողական գիտական ընկերության (ՈԽԳԸ) և «Ֆիմա» մարզական ակումբի աշխատանքները կարգավորող իրավական ակտերի առկայություն,
3. Ուսանողների շրջանում գիտական գործունեության ակտիվացում,
4. Ուսանողական start-up-երի առկայություն, ուսանողների քաղաքացիական և հասարակական գործունեության ակտիվացում, ուսանողական մարզամշակութային կյանքի ակտիվացում, առողջ ապրելակերպի խթանում, բուհի ճանաչելիության բարձրացում:

ՆՊԱՏԱԿ 9. Որակի ապահովման ներքին համակարգի զարգացում

1. Հարգացնել կրթության որակի ապահովման (ՈԱ) ներբուհական համակարգը, բուհում ամրապնդել որակի մշակույթը:
2. Բուհի բոլոր ստորաբաժանումներում և գործընթացներում ձևավորել ՊԻԳԲ (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) շրջափուլով աշխատելու մեխանիզմներ:
3. ՀՖԿՍՊԻ-ի հիմնական շահակիցների կարիքների վերլուծության, հաշվետվողականության մեխանիզմների և բացահայտված արդյունքների հիման վրա իրականացնել բարեփոխիչ քայլեր ու գործողություններ:
4. Վերանայել և բարելավել ՈԱ-ի քաղաքականությունը, ընթացակարգերն ու մեխանիզմները՝ հիմնվելով ներքին և արտաքին գնահատումների արդյունքների վրա:
5. Նպաստել ՀՖԿՍՊԻ-ի ինտեգրմանը Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ):

Ակնկալվող վերջնարդյունքներ

1. Բուհում որակի վերահսկողության մշակույթի ամրապնդում, շարունակական բարելավում՝ հիմնված համագործակցության, թափանցիկության և վստահության վրա:
2. ՀՖԿՍՊԻ-ի գործունեության արդյունավետության գնահատում, արդյունավետության ցուցանիշի բարձրացում:
3. Որակի կառավարման համակարգի տարբեր մակարդակներում ներքին և արտաքին շահակիցների ընդգրկվածության աճ:
4. Որակի մշակույթի տարածմանը նպաստող արդյունավետ մեխանիզմների մշակում և կիրառում, որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի և կանոնակարգերի առկայություն և դրանց կիրառելիության բարձր ցուցանիշ:
5. ՀՖԿՍՊԻ-ի որակի ներքին ապահովման գործընթացների համապատասխանություն Եվրոպական չափորոշիչների և ուղենիշերին:

ՆՊԱՏԱԿ 10. Կարիերայի կառավարում

1. Նպաստել ՀՖԿՍՊԻ ուսանողների ու շրջանավարտների զբաղվածության և կարիերայի աճի հնարավորությունների զարգացմանը, աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը:
2. Ընդլայնել ՀՖԿՍՊԻ-ի համագործակցությունը գործատուների հետ՝ նպաստելով ՄԿԾ-ների արդիականացմանը և կրթության որակի բարձրացմանը:

3. Ամրապնդել բուհ-շրջանավարտ-գործատու փոխներգործուն կապը:

Ակնկալվող վերջնարդյունքներ

1. ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների ու շրջանավարտների հնարավորությունների ընդլայնում և զբաղվածության աճ:
2. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտությունների ձևավորում:
3. ՀՖԿՍՊԻ-ուսանող-շրջանավարտ-գործատու փոխներգործուն և մշտական կապ:

ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԴԵՎԱՎԱՐՄԱՆ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Ինստիտուտը ռազմավարական ծրագրի առաջընթացը, նպատակներին հասնելու գործընթացներն ուսումնասիրելու համար իրականացնում է հերթական և արտահերթ մշտադիտարկումներ: Հերթական մշտադիտարկումն անցկացվում է 2 տարին մեկ անգամ: Արտահերթ մշտադիտարկումն իրականացվում է, եթե տեղի է ունեցել արտաքին կամ ներքին միջավայրի այնպիսի փոփոխություններ, որոնց առկայության դեպքում կասկածի տակ է դրվում ռազմավարական ծրագրի բնականոն շարունակության ապահովումը:

Հերթական կամ արտահերթ մշտադիտարկումներ իրականացնելու համար ինստիտուտի ռեկտորի հրամանով կազմվում է մշտադիտարկող խումբ՝ հերթական մշտադիտարկում իրականացնելուց առնվազն մեկ շաբաթ առաջ: Մշտադիտարկող խմբի կազմում չեն կարող ընդգրկվել ծրագրի մշակման աշխատանքներ իրականացնող խմբի անդամները:

Մշտադիտարկման նպատակն է՝ ստուգել ծրագրի իրագործման առաջընթացը, որն ապահովվելու և նպատակներին հասնելու համար՝

1. ապահովվում է ստորաբաժանումների և պատասխանատու անձանց գործողությունների համապատասխանությունը ռազմավարական ծրագրի տեսլականին, առաքելությանը, նպատակներին և ուղղություններին,
2. վերանայվում է գործող ծրագիրը՝ ներքին և արտաքին փոփոխություններին համապատասխան:

Մշտադիտարկման միջոցով պարզվում է՝

1. ծրագրի իրականացման վերջնարդյունքների համապատասխանությունն իր սահմանած նպատակներին և ուղղություններին,
2. տեսլականին և առաքելությանը հասնելու միտումները,
3. շահակիցների կարիքների բավարարման մակարդակը,
4. ծրագրի ազդեցությունը ինստիտուտի զարգացման գործում,

5. ծրագրի իրագործման պատասխանատուների գործողությունների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը,
6. ծրագրի վերանայման անհրաժեշտությունը:

Մշտադիտարկման համար տվյալների հավաքագրման աղբյուրներն են՝

1. ինստիտուտի վիճակագրական տվյալները,
2. ՈԱԿ-ի ներքին մշտադիտարկման հաշվետվությունները,
3. ինստիտուտի ստորաբաժանումների և ղեկավար մարմինների հաշվետվությունները,
4. տարեկան գործունեության և ֆինանսական հաշվետվությունները,
5. ինստիտուտի մշակած փաստաթղթերը,
6. մշտադիտարկման խմբի՝ շահակիցների տարբեր խմբերի հետ անցկացվող ֆոկլուս խմբերի կամ հարցումների արդյունքները,
7. ինստիտուտի ռեսուրսային բազայի ուսումնասիրության վերաբերյալ հավաքագրված տվյալները:

Ռազմավարական ծրագրի առաջընթացը, ազդեցությունն ինստիտուտի գործունեության վրա և շահակիցների շրջանում իրականացվում է գնահատման միջոցով: Մշտադիտարկումը և գնահատումը հնարավորություն են տալիս անհրաժեշտության դեպքում փոխել կամ վերանայել գործող ծրագիրն արտաքին և ներքին միջավայրի էական փոփոխություններին ժամանակին արձագանքելու նպատակով:

Գնահատման համար կարևոր ցուցիչ է չափելիությունը, այդ նպատակով ուշադրություն է դարձվում հստակ, իրագործելի և չափելի նպատակների սահմանմանը, ինչպես նաև նպատակներին և ուղղություններին հասնելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացման ուղղությունները, մշտադիտարկման անցկացման և գնահատման ձևաչափերը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Ծրագրի իրականացման արդյունավետությունը պայմանավորված է մի շարք հնարավոր ռիսկային գործոնների գնահատմամբ, մեղմացմամբ կամ կանխարգելմամբ: Ռիսկային գործոնները, դրանց հնարավոր հետևանքները և կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ գործողությունները ներկայացված են աղյուսակում:

Ծրագրի իրականացման ռիսկային գործոնները, հետևանքները և դրանց մեղմացմանը կամ կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ գործողությունները

Հ	Ռիսկ	Հետևանք	Մեղմացման կամ կանխարգելման գործողություն	Գործողության պատասխանատու(ներ)
1.	Օրենսդրական փոփոխություններ	Բուհերի խոշորացում	Մասնագիտական կրթական բազմազան ծրագրեր	Ռեկտոր, պրոռեկտորներ
2.	Անբավարար ֆինանսական ռեսուրսներ	Ռազմավարական ծրագիրը չի իրականացվում կամ իրականացվում է մասնակի	ա. ռիսկերի գնահատում, բ. համապատասխան ծախսերի նախատեսում, գ. դոնորների հետ բանակցային գործընթացների վարում	Ռեկտոր, պրոռեկտորներ
3.	Ռազմավարության վերաբերյալ արտաքին և ներքին շահակիցների անբավարար իրազեկվածություն	Գործընթացների կազմակերպման ձախողում	Ռազմավարական ծրագրի նպատակների, միջոցառումների ժամանակացույցի, ակնկալվող արդյունքների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ	Պրոռեկտորներ
4.	Ռազմավարության իրականացման գործընթացներում շահագրգիռ կողմերի անտարբերություն կամ թույլ ներգրավվածություն	Ռազմավարական ծրագիրը չի ծառայում իր նպատակներին	Բացատրական և իրազեկման աշխատանքներ, ներքին շահակիցների մոտիվացիայի բարձրացման միջոցառումների ներդրում	Ռեկտոր, պրոռեկտորներ
5.	Երկրի անկայուն քաղաքական և տնտեսական վիճակ	Ռազմավարական ծրագիրը չի իրականացվում կամ իրականացվում է մասնակի	Իրավիճակային լուծումներ	Ռեկտոր, պրոռեկտորներ
6.	Ֆորսմաժորային իրավիճակներ՝ պատերազմ, համավարակ և այլն	Ռազմավարական ծրագիրը չի իրականացվում կամ իրականացվում է մասնակի	Իրավիճակային լուծումներ	Ռեկտոր, պրոռեկտորներ



ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 11
Հեռ. (+37410) 55-33-10, (+37410) 55-10-04
info@sportedu.am, www.sportedu.am
facebook.com/sportedu.am

